Հ Ր Ա Մ Ա Ն N 336-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«03» ՀՈՒԼԻՍԻ 2017 Թ. ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ

ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին» N 436-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետի «դ» ենթակետով և 5-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի 2017 թվականի հունիսի 23-ի N 02/13/1/1584-17 գրությունը և Ա. Գևորգյանի դիմումը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի ղեկավարի տեղակալի (ծածկագիր՝ 14-1.2-13) ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար Արմեն Սոսի Գևորգյանի հետ 2017 թվականի հուլիսի 4-ից կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ